ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/176/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **13 օգոստոս 2025թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի օգոստոսի 13-ին քննելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու անդամ Կարեն Ռոլանդի Սիմոնյանի կողմից 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/176/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով,

պարզել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու անդամ Կարեն Սիմոնյանի Հայտարարագիրը հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից Կարեն Ռոլանդի Սիմոնյանի Հայտարարագիր ներկայացնելու պարտականության վերաբերյալ ծանուցումը 2025 թվականի ապրիլի 14-ին թիվ 01/1263-2025 գրությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզպետին՝ խնդրելով փոխօգնության կարգով ծանուցումը տրամադրել Կարեն Սիմոնյանին: Նշված ծանուցումը Կարեն Ռոլանդի Սիմոնյանին է հանձնվել 2025 թվականի ապրիլի 18-ին, սակայն վերջինս «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետում, ինչպես նաև դրանից հետո՝ 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացրել Հանձնաժողով:

1.3 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 18-ին Կարեն Ռոլանդի Սիմոնյանին է հասցեագրվել թիվ 01/2868/6-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 12:30-ին ներկայանալ Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն մասնակցելու, իսկ գրությունը ստանալուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 12:30-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով: Հաշվի առնելով այն, որ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկվել է Կարեն Սիմոնյանին, սակայն ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել այն ստանալու մասին հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի կարգավորումները՝ ծանուցումը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև ուղարկվել է Վարդենիս համայնքի ղեկավարին:

1.4 2025 թվականի օգոստոսի 11-ին պատշաճ ծանուցված Կարեն Ռոլանդի Սիմոնյանի ներկայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/132/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով: Կարեն Սիմոնյանը խնդրել 2025 թվականի օգոստոսի 13-ին նշանակված գործի քննությունը անցկացնել իր բացակայությամբ:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Կարեն Ռոլանդի Սիմոնյանի բացակայությամբ 2025 թվականի օգոստոսի 13-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/176/2025 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

2.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու անդամ Կարեն Ռոլանդի Սիմոնյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

2.2 Գործի քննության օրվա դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու անդամ Կարեն Ռոլանդի Սիմոնյանի Հայտարարագիրը ներկայացվել է Հանձնաժողով:

III. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

3.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու անդամ Կարեն Ռոլանդի Սիմոնյանը Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

3.3 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

3.10 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

3.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս

ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ դեպքում Կարեն Ռոլանդի Սիմոնյանի կողմից մինչև գործի քննության օրը Հայտարարագիրը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարեն Ռոլանդի Սիմոնյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/176/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Ռոլանդի Սիմոնյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ